

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և առն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաւանդիւր բառին 2 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

## ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն  
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝  
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի  
ամսականը՝ 1 ռուբլի:

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:  
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարձրակապ փողոցի անկիւնը):  
Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ  
արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „Mschak“.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոքր-Ասիայի արդիւնաբերութիւնը.— ՆԵՐՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հրատարակչների գերը լուսաւո-  
րութեան գործում. Քաղաքացիների ընտրութիւնը  
Նոր-Նախիջևանում. Նամակ Բաթումից. Նա-  
մակ Կաղզուանից. Նամակ Խմբագրութեան.  
Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հին  
ցաւերից մէկը. Նամակ Ամբրիկայից. Արտաքին  
լուրեր.— ՀԵՐԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայերէն հին գրա-  
կանութեան խնդիրներ:

### ՓՈԳՐ-ԱՍԻԱՅԻ ԱՐԴԻՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Փոքր-Ասիայի հարստութիւնների շահա-  
գործութիւնը տեսական վիճակից ան-  
ցել է գործնական ձեռնարկութիւննե-  
րի: Այդ շահագործութեան մասին սկսել  
են խօսել արդէն ընթացք ստացած մի  
գործի մասին և քննվում են ընդարձակ  
ձեռնարկութիւնների զանազան ծրագիր-  
ներ: Գերմանիայի արդիւնաբերութեան  
նախնական մի հիմնարկութիւն՝ «Bund der  
Industrieller» նորիս ժողով էր հրաւիրել  
խորհրդակցելու գերմանական արդիւնա-  
բերական զարգացման մասին: Այդ ժո-  
ղովում մի գործարանատեր՝ Ժոն Գրոգէ,  
որ ինքը անձամբ այցելել էր Փոքր-Ասիան  
և ուսումնասիրել նրա տնտեսական պայ-  
մանները, մի մանրամասն զեկուցումով

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐ

### Ա. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆՈՍԻ

Ա. Ութ տարի է ի վեր Հայերէն հին գրակա-  
նութեան մեծամեծ խնդիրներ կը յուշուին. ու-  
սուցչապետը, վարդապետը, սարկաւազ և մա-  
գիստը՝ իւրաքանչիւր ու խօսեցաւ և կը խօսի  
ըստ իւրում ըմբռնման, համոզման և գի-  
տութեան և անկարծելի վճիռների տրուե-  
ցան և կը տրուին. յորոց մին է, և ամե-  
նէն ապշեցուցին, թէ Մովսէս Խորենացի ոչ է  
մատենագիր Հինգերորդ դարու, ինչպէս ցայժմ  
հաւատացած էինք Հայերս, այլ Ութերորդին,  
մանաւանդ թէ ճշգրտին հաշուով՝ Իններորդ  
դարու առաջին տարիներուն:

Թուի թէ այս նորածայն վարդապետութիւնս  
մեծ շշուէ հանեց Ազգին մէջ: Եղան բուն ընդ-  
դիմախօսը, ինչպէս կերակայ՝ զլուստարայէն  
«Բազմապէս» պէտք էր հարկաւ ինչ որ ոչ սակաւ  
ուղեղներ Դամասկոսի ճանապարհին որ ի Սաւ-  
ղոսէ պաշտօնացան և նոր բանական գրչուն  
ներքէ մտադիր զինուորեցան: Իսկ ես Ստո-  
նոյի պանդուխտ մնացի ուր որ էի և ինչ որ  
էի. քանզի մարդ, որ քառասունամեայ ժամանակի  
մէջ զՊատմութիւն Խորենացու քանի մի  
հարկը անգամ ընթերցած է և եւանդեամբ  
ուսումնասիրած՝ քնական է, որ վաղուց հաւ-  
տատուն գաղափարներու տէր կըսէ ըլլայ, թէ  
Խորենացի յորում ժամանակի կայրէր, թէ ինչ  
է իւր Պատմութեան իսկական արժէքն և

պարզեց գերմանական արդիւնագործու-  
թեան վերապահած դերը Փոքր-Ասիայ-  
ում ընդհանրապէս և Անատոլիայում:  
Թիւրքաց Հայաստանում մասնաւորապէս:  
Այդ զեկուցման նախըլ Փոքր-Ասիան  
արդիւնագործական զարգացման տեսակէ-  
տից սկսել է աչքի ընկնող փոփոխութիւն-  
ների ենթարկվել: Ճնորհիւ երկաթուղի-  
ների շինութեան և եւրոպական առևտրի  
զարգացման, զարկ են ստացել երկրագոր-  
ծութիւնը, շերամապահութիւնը, բամ-  
բակագործութիւնը, այգեգործութիւնը և  
գիւղատնտեսութեան ուրիշ ճիւղեր: Անա-  
տոլիայի երկաթուղիների կենտրոնական  
վարչութիւնը, ցանկանալով զարգացնել  
երկրի արդիւնագործութիւնը, հիմնել է  
մի առանձին բււրօ, որի նպատակն է  
նպաստել տեղական գիւղատնտեսական կա-  
տարեկագործութիւններին և միջնորդ հան-  
դիսանալ Փոքր-Ասիայի և եւրոպական  
արևտրական տների միջև: Բիւրօի ղեկա-  
վար է հրաւիրված մի գերմանացի պրո-  
ֆեսոր: Գործը օրէց օր ընդարձակվում է  
և ճիւղաւորվում: Եւրոպական մրցութեան  
համար բացված է մի մեծ ասպարէզ, ո-  
րի վրա իշխող լինել ցանկացող պէտք է  
կարողանայ պատրաստել ոչ միայն էփան,  
այլ և լաւ յատկութեան ապրանքներ:  
Ահա այսպէս եւրոպայի մէջ ծրագրվում

որ չափով արծառնաւատ են իւր աւանդա-  
ներն, թէ որպիսի է լեզուն գոր կը գործածէ:

Հայ բանասիրաց մէջ առաջինն ես եղայ  
(կարծեմ), որ խնդրի շարքից թէ «Մովսէս  
Խորենացի յորում ամի գրած է իւր Պատ-  
մութիւնն Հայոց»<sup>1)</sup>: Հակառակ ընկալեալ  
կարծեաց՝ ըսի թէ ինչորդ Պատմութեան  
Սահակ Բագրատունի՝ ոչ է Սահակ Ապետ,  
մարդկան Հայոց, մեռեալ ի պատերազմի յամին  
483, այլ այլ ոմն Սահակ իշխան Բագրատու-  
նեաց: Յենթով այն մասնաւորութեան վերայ՝ որ  
Խորենացի կը յիշատակէ զգիւտ նշխարաց Թա-  
ղէսի և Սանդիտոյ, զորոյ ժամանակն այլ  
ոմն մատենագիր կը գնէ յաւուրս Յովհաննու  
կաթողիկոսի (Մանդակունց) և Վահանայ Սա-  
միկոնեայ մարզպանի, ըսի թէ Խորենացու  
Պատմութեան երեք գրքն թուին ինձ չա-  
րագրեալ յամին 486—490, մինչդեռ յառաջ  
քան զիս կը գրուցուէր յամին 460 կամ  
460—470, սխալ հասկանալով զանձնաւորու-  
թիւն Սահակայ Բագրատունոյ: Ըսի նաև որ  
Ղազար Փարպեցի ի լոյս հանած է իւր Պատ-  
մութիւնն նախ քան զԽորենացու հրատարա-  
կել զՊատմութիւնն Հայոց: Չունելով  
յայնժամ ոչ զՋամբեան, ոչ զԱսողիկ, ոչ զՄխի-  
թար Սյրիվանցի, անկարող գտնուեցալ խօսե-  
լու միւս ևս պատմական յիշատակութեան վե-  
րայ առ Խորենացու (Բ. դա. 379) <sup>2)</sup>, որ է  
Լուսաւորչի նշխարաց գիւտն ի ձեռն Գառնիկ  
ճգնաւորի: Գիտէի թէ Խորենացի գրած է զայն  
տեղի Պատմութեանն յետ գիւտին Գառնի-  
կայ, բայց զի անտեղեկան էի թէ Գառնիկ յո-

<sup>1)</sup> Քննասէր, Պաշկ Եղեղը, 1887, երեսը 7—28:  
<sup>2)</sup> Կը գործածուէր զփոքրագրել Պատմութիւն  
Խորենացու հրատարակեալ է Ս. Ղազար յամին 1881:

են Արեւելում և Փոքր-Ասիայի նման մի  
հարուստ երկրում գործելու եղանակներ,  
իսկ ինքը Արեւելը միայն լուս հանդիսա-  
տես է մնում տնտեսական այդ նոր ար-  
շաւանքներին, սպասելով, որ ամեն բան  
գայ ճարտի, Թեմալայի կամ Սեւայի ափե-  
րից: Անկասկած ուրախալի է, որ երկրի  
նոր հիւրերը մտնում են արդիւնաբերու-  
թեան կուտուրայի հիմունքներ, որ հա-  
րուստ բնութիւնը իր քնած գրութիւնից  
շարժման մէջ է գրվում, որ եւրոպական  
շահերի պաշտպանութեան պատճառով  
երկրի մէջ հանգստութիւն պիտի մտցնվի  
և աւազակային խմբերի գործունէութեան  
գէժ հաստատ արգելքներ պիտի դրվեն,  
բայց և այնպէս ցաւալի է, որ ասիական ան-  
շարժութեան զատապարտված կառավարու-  
թիւնը իր խոր տգիտութեան պատճառով  
չէ կարողանում գործի հրաւիրել երկրի  
կուտուրական ոյժերը և տէր դառնալ երկրի  
արդիւնագործական զարգացման, և այն-  
տեղ ապրող ընդունակ ցեղերը փոխանակ  
դառնալու շահագործող և արդիւնաբերող,  
մնում են ձորտեր և տնտեսական ստրուկներ:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻ ԳԵՐԸ ԼՈՒՍԱՌՈՒԹԵԱՆ  
ԳՈՐԾՈՒՄ

Ո՛վ փոքր ի շատէ ծանօթ է ռուսաց գրակա-  
նութեան հետ, անուշա նա լաւ գիտէ, թէ ինչ  
անպիլն գործ են կատարում մի քանի անհատ-  
ներ, որոնք իրանց գործունէութեան առարկայ  
են գործելու գրքեր հրատարակելու: Օրինակ՝ իմ  
չէ յայտնի Պ. Պաւլենկովի անունը, որ անդա-  
կար երեսն է զալիս բաղմամբ զեղեցիկ և  
զիւրամատչելի հրատարակութիւնների վրա: Կա-  
րելի է առանց չափազանցութեան մէջ ընկնե-  
լու ասել, որ Պաւլենկովի հրատարակութիւնները  
մի ամբողջ գրադարան են կազմում, ուր մըտ-  
նում են գրականութեան համարեա բոլոր ճիւ-  
ղերը—կիպարութիւն, քննադատութիւն, պատ-  
մութիւն, գիտական հանրամատչելի գրքեր և  
այլն: Վերջին տարիներս մեծ անուն հանեց իւ-

րում ամի գտաւ զնշխարալ՝ լուսութեամբ անցայ,  
մինչև որ աստի անտի տառնալով կամ նուէր  
ընդունելով կարևոր հայերէն մատենաներ և  
կրկին ու կրկին քննելով զգրածներս ի Քննա-  
սիրի հասցայ այն եզրակացութեան թէ Փար-  
պեցուց Պատմութեան գրութեան ժամա-  
նակն է յամին 490—491, անազանադոյն, այլ  
ոչ կանխադոյն. իսկ Խորենացուց Պատմու-  
թեանն Հայոց գրութեան ժամանակն՝ վեր-  
ջին ամբ Հինգերորդ դարուն, 495—500, կամ  
լաւ ևս՝ առաջին ամբ Վեցերորդին <sup>1)</sup>: Այս-  
չափս Խորենացուց Պատմութեանն յօրին-  
ման ժամանակն համար:

Ինչ է Խորենացուց Պատմութեան իսկա-  
կան արժէքն և որչափ արժանաւոր են իւր ա-  
ւանդածներն: Այս մասին ընդարձակ պիտի  
խօսիմ (եթէ Տէր կամեցի) յուսումնասիրու-  
թեան Մովսէս Խորենացի և Նորին  
Թարգմանութիւնը. բայց այժմէն կարեւր  
յայտարարել թէ ես կատարեալապէս վստահ եմ  
որ Խորենացի ոչ ինչ հարած է յայն պատմագրաց  
անուններն զորս կը նշանակէ, Վերոքնա  
կամ Ղաբուքնա որ գտնուեցաւ՝ առհասարակ  
է մեզ թէ նոյն ինքն Մարիբաս, Խոռոհբուտ, և  
այլք, չեն ստեղծեալք ի Խորենացուց: Սխալ  
կամ անճիշդ են իւր այլ և այլ տեղեկութիւնքն,  
վստի զի սխալ կամ անճիշդ էին նաև իւր  
առաջնորդաց գրածները, և վստի զի կը գրէր  
իւր մարդ սխալանալ, իւր Մովսէս Խորենացի,  
և ոչ իւր Մովսէս աստուածաշունչ մարգարէ:  
Կը գրէր յիշողութեամբ (Գ. ա. 399), առանց

<sup>1)</sup> Տե՛ս Վ. Օ. Մ. յ. 1896, Յունիս, երեսը 327, ծանո-  
թութիւն 37: Թուականէն չորս տարի յաւալ (20  
Ա. դարաստ 1892) գրած է հաւ. Ս. Ու. Կարէթ. «J'ai  
encore deux autres raisons pour prétendre que  
Moïse n'a pu composer son Histoire qu'entre  
la fin du V-ème siècle et le commencement du  
VI-ème».

րև հրատարակիչ նաև տիկին Օ. Պապովա, որ  
անդադար մի շարք գեղեցիկ գրքեր է լոյս ըն-  
ծայում: Թէ Պաւլենկովի և թէ Պապովայի ա-  
նուններն արդէն գրաւական են դարձել, որ նը-  
րանց հրատարակութիւնները լաւ գրական դո-  
ւեր են: Բացի այդ երկուսից, կարելի է յիշել և  
Լ. Պանտելեւիկին, որ նոյնպէս լուրջ հրատարակ-  
չական գործունէութիւն ունի, թէև ոչ այնքան  
բեղմնաւոր: Կան և շատ ուրիշ անհատներ, ո-  
րոնց անունները յիշել չարժէ, քանի որ դրանց  
գործունէութիւնն աւելի առևտրական բնաւո-  
րութիւն ունի, ուստի և տուած ապրանքի ներ-  
քին արժանաւորութիւնների վրա ուշադրութիւն  
չեն դարձնում: Մի կողմ թողնենք նաև ընկե-  
րութիւնները, որոնք նուիրված են հրատարակ-  
չութեան:

Խօսելով անհատ-հրատարակչների մասին, չէ  
կարելի անտես առնել մի վերին աստիճանի  
համարելի գործիչին: Դա ամբողջ կրթված Ռու-  
սաստանին յայտնի Կ. Սուրաուեկովն է: Այդ  
հրատարակչի կեանքն ու գործունէութիւնն այն-  
քան հետաքրքրական են և օրինակելի, որ մենք  
հարկաւոր ենք համարում մի քանի տեղեկու-  
թիւններ տալ դրանց մասին, քաղելով «Русскія  
Вѣдомостѣ» լրագրից: Կ. Սուրաուեկով այժմ 80  
տարեկան մի ձեռուն է, բայց անընդհատ ե-  
ռանդով շարունակում է հրատարակութեան գոր-  
ծը, որ սկսել է սրանից 40 տարի առաջ: Նա  
համարեա ոչ մի կրթութիւն չէ ստացել: Մի  
կերպ ծանօթանալով գրադիտութեան, այսինքն  
գրել և կարող սովորելով, նա մտաւ իր վա-  
ճառական հօր խմուրով: Բայց ինչևիդ առողջ  
դատողութեան տէր մարդ, անկեղծ որոտով սու-  
րելով կրթութիւնը, նա առանց հիմնաւոր ուս-  
ման էլ կարողացաւ այնպիսի գործունէութիւն  
սկսել, որը դրաւ նրան ժողովրդական բարեբա-  
րների շարքում: Նա մօտեցաւ քառասունական  
թակահանգին Ռուս նշանաւոր գործիչների շրջա-  
նին և նրա համար՝ «համալսարան», «պրոֆէսոր»  
անունները մի ինչ որ սրբալից նշանակութիւն  
ստացան: 50-ական թակահանգից նա սկսեց  
գրքեր հրատարակել, ամենայն ուշադրութեամբ  
և պատրաստակամութեամբ վերաբերվելով Սուր-  
վայի համալսարանի յայտնի պրոֆէսորների խը-  
րատներին և ցուցմունքներին: Բաւական է աչ-

ունելոյ ի ձեռնին զամենայն մատենան՝ որոյ  
կարօտ էր (ՎՄԻԹէ մատենա մեքէ կայէ ինձ).  
Ա. գ. 17.—«Նա և ոչ մատենագրութիւնը Գիո-  
ղորի հուպ առ մեզ ենք. Գ. ա. 399), կը գրէր  
հապճեպով (Ա. լր. 130), զի Սահակ Բագրա-  
տունի անհամբեր երկտառագրն՝ անդադար կը  
նեղէր կը տառապեցնէր զնա որ փութայ ա-  
ճապարէ. կը գրէր ի ձեռնիքն, ի հիւանդու-  
թեան և անպարտալ ի թարգմանութեանց (Գ.  
կե. 562—563), մի քան զմի դժուարին պարա-  
գանքն՝ որ հարկ ի վերայ կը գնէն արդարաւոր  
մարդոյ դատել զերանելի ձեռնիքն արդահա-  
տանգ և ներդրամութեամբ, ոչ թէ անգիւո-  
թեամբ հանգոյն դառն դահճի: Վերջապէս ան-  
միտելի է, որ ուրեք ուրեք իկպաւանական  
կերպարանք տուած է իւր պատմածներուն,  
բայց և յայտմ յայնպէս չունի. յանցաւորն  
է Սահակ Բագրատունի որ կ'աղաչէր (Գ. կե.  
563), կ'աղաչէր (Բ. կ. 306) «պարգաւը զան-  
գարդն» (Յաղապս Բիւրասպի Ամրահակայ, 133):  
Զարգարէլ զանգար գոն. Բնչպէս այս եր-  
կու բառը, զորոց կարեւորութիւն ոչ որ հասկա-  
ցած է ցարդ, զարմանալի լուսով կը լուսաւորեն  
օրինակի աղագաւ զերբորդ գրոց իւր և իւր,  
զլուսններն:

Իսկ թէ որպիսի է Խորենացու լեզուն կամ  
ոմն, տարակոյս չը կայ, որ մերթ աստ և  
մերթ անդ՝ շատ հեռի կը մնայ ի սքանչելի  
հայկաբանութենէ ձեռնաստուն Աշակերտաց Սա-  
հակայ և Մաշտոցի՝ զորմէ կը խօսիմ ի մատե-  
նին Վորիւն Վաղդայեան և Նորին  
Թարգմանութիւնը, երեսը 18—19: Սա-  
հակայ եթէ չէ ըստ ամենայնի դասական (clas-  
sique), ունի այնպիսի առաւելութիւններ և գե-  
ղեկութիւններ զորս ընդունայն է փնտռել ի  
գրութիւնս երկրկեանց, եփրեմեանց, Կերպ-

քից անցկացնել Սօղառանկովի հրատարակութիւնները ցուցակը, որպէս զի հասկանալով, թէ որքան պատաւներ գործունէութիւն է ունեցել բարի ձգտումներով օժտված այդ մարդը: Ռուսաց յայտնի գիտնականները և գրողները գործերը, որոնք լոյս տեսան նրա հրատարակութեամբ, դեռ այնքան մեծ բան չեն ներկայացնում, որովհետև այդ գործերն առանց այն էլ հասարակութեան սեփականութիւն կը դառնային: Աւելի մեծ է Սօղառանկովի արածը թարգմանական ճիւղի մէջ: Եթէ չը լինէր նա, կարծի էին ունենում լեզուով լոյս տեսած լինել մի շարք եւրոպական մեծ հրատարակութիւններ, որոնք գիտութեան և լուսաւորութեան շտեմարաններ են ներկայացնում: Յիշենք զրանցից մի քանիսը: Անգլիական հռչակաւոր պատմաբան Գրեգորի աննման հեղինակութիւնը՝ «Պատմութիւն անկման և խորտակման հռովմէական կայսրութեան» (եօթն հատոր, իւրաքանչիւրը 500—600 երես), Գիշոր Վեբերի «Ընդհանուր պատմութիւն» (16 հատոր, իւրաքանչիւրը 800—1000 երես), որ ամենաընդարձակ և ամենահարուստ է առաջ գրականութեան մէջ, Ֆայֆի «Պատմութիւն XIX դարի» (4 հատոր), Գրինի «Պատմութիւն անգլիական ազգի» (4 հատոր), Մոմսթերի «Հնումի պատմութիւն» (5 հատոր) Ստրաբոնի աշխարհագրութիւնը, Ֆիլոսոֆի-Կուլանտի, Տէնի, Գիշորի, Կուրցիուսի, Լամպրիւսի և այլ բազմաթիւ եւրոպական հեղինակաւոր գիտնականների գրածները—ասան ինչ գործեր են հռչակել Սօղառանկովի անունը: Աւելորդ է ասել թէ որքան ահագին գումարներ են գործադրվել այդ բազմաճառոր հեղինակութիւնները թարգմանել տալու և հրատարակելու համար, աւելորդ է նոյնպէս ասել թէ քանիք քանի գրական ոյժեր ապահովել են իրանց գործունէութիւնը անխնայ հրատարակչից ստացած վարձատրութեամբ: Ամեն տարի մի նոր հարստութիւն է մտնում Սօղառանկովի ուսուցչականութեան մէջ: Ներկայումս նա հրատարակում է Լալիսի և Բամբուի «Ընդհանուր պատմութիւնը», որ նոյնպէս մի ահագին գործ է, մինչև այժմ լոյս են տեսել չորս ահագին հատորներ, իւրաքանչիւրը 900—1000 երեսներով և արժեն շատ էժան—հատորը 3 ռուբլի:

Ձեռք կարող ասել, թէ Սօղառանկովի բոլոր հրատարակութիւնները ժառանգել են գին կողմից: Վեբերը արժէր 79 ռուբլի, Գրեգորը 26 ռուբլի: Բայց դրանք այնպիսի հրատարակութիւններ են, որոնք աւելի գրադարանական զարդեր են կազմում:

Այդ գեղեցիկ գործունէութիւնը, որ անշուշտ իր տեղը կունենայ Ռուսաստանի քաղաքակրթութեան պատմութեան մէջ, մենք յանձնարարում ենք մեր հայ հարուստներին: Գործել, լուստիւն անել, անուն վաստակել էք ուզում, ձեր առաջին է մեր աղքատիկ գրականութիւնը: Մեծագործութիւններ չենք պահանջում, գոնէ հասկանալի և Կարեան, թող թէ ի պատմագրութիւնը Սօղառանկովի համար, ի Սեբեոս, ի Յովնան Մամիկոնեան, ի Ղևոնդ Նրէց, ի Քովմա Արծրունի, ի Յովնան Կրասնոսկերտեցի և յԱնանուս Արծրունի, որոց ակնկալութիւն անգամ թողած չէ Ռուսնացի, որ կարող լըլլան իրեն հաւասարակ, ինչպէս ըսած է Յովսէփ Շէնիէ (I. Chénier) խօսելով զհակոտնէ՝ հռովմայեցի պատմագրին յաջորդներուն համար. խօսումն գոյնեղով նկարագրութիւնը, հայկաբանութիւնը զգուտ և կրթով, քանի մի բառիւ շատ բան իմացընել, գերազանց օրինակ այն ոճով, զոր Դոպլիայիցը կը կոչեն Style lapidaire, Արձանագրական ոճ:

Աւստիկ Մովսէս Թորենացի ինչպէս եւ ծանալած եմ և հակադասում:

Սեր ուսուցչական Ա. Կարիէր և իւր համախոհ՝ նախ մեղմով, յետոյ բարձրաձայն հռչակեցին թէ Թորենացի ինքեզորդ դարու պատմագիր չէ, այլ Ուլիբորդին կամ Խնկերորդ դարու առաջին տարիներուն, յիշեցի զՔովմա Արծրունի՝ որոյ համար գրած է Հ. Միքայէլ Չամչեանը՝ «Քովմա վարդապետ Սթրուսի ի դասակարգութեան աշխատանքը Արքայի Նիդիէի՝ ի վախճան Հինգերորդ դարուն, և կամ ի սկզբան Վեցերորդին: Ձտրա սակաւ գրուած ունիւր առ մեզ ի վերայ Արքայի վարդապետ և Վահանայ Արծրունու, և ի վերայ գործող Բարձրմայի նետորդականի, ցամ Տեառն իւր 500»: Յիշեցի նաև զԳրիգոր Սարկաւազապետ՝ յորմէ ունիւր զՍուրբ Գրիգոր Լուսաւորիչ, ասացեալ ի սուրբ քաղա-

մեսո, չափաւոր, բայց յարատե հրատարակական գործունէութեամբ ապացուցեցէ, որ զուր է կարող էք օգնել ձեր չըլապատողներին: Փամահակ է հասկանալու որ իրական բարեբարութիւնը ժողովրդի մէջ գիրք, լոյս տարածելն է: Հայ ունեւորը մինչև այժմ վերին աստիճանի արհամարհանքով է վերաբերվել այս ճշմարտութեան և իր բարեգոյծութիւնը ցոյց է տալի բարէ յիշուելով իր կառուցանելու, եկեղեցիներ, վանքեր զարդարելու մէջ: Թող հիմա հասկանան, որ սոսկապարական խօսքի միջոցով էլ կարելի է մեծ և անմահանալի բարեբարութիւններ անել թէ ժողովրդին և թէ գրականութեան...

ՔԱՂԱՔԱՊԼԻ ԸՆԾՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ-ՆԱԽԻ-ՋԵՒՆՈՒՄ

Նոր-Նախիջևան, հոկտեմբերի 17-ին  
Քաղաքակրթի ընտրութիւնը Նոր-Նախիջևանում արժանի է առանձին ուշադրութեան: Երկու անգամ պ. Պալապանեան ընտրվեց քաղաքակրթի մեծամասնութեամբ միայն մի ձայնի: Երկու անգամ չընտրվեց ոչ մի թեկնածու և քաղաքակրթի իշխանակ վեց: Վերջապէս այս հոկտեմբերի 10-ին առաջարկվեցին եօթը թեկնածուներ և եօթին էլ սեւացան: Ինչ է դրա իսկական պատճառը, ինչու Նոր-Նախիջևանի քաղաքակրթը երբեք չէ ստացել ձայների այնպիսի մեծամասնութիւն, որ սովորական մի բան է ուրիշ քաղաքներում: Մատնանիշ անեմք երկու պատճառների վրա. 1) թեկնածուների բազմութիւնը և 2) ինտրիգաները, անվերջ ինտրիգաները: Դեռ մեր բանաստեղծ Սիւրիկ Նկատել էր, որ մեղանում բոլորն իրանց յարմար և արժանի են տեսնում քաղաքակրթի լինելու: Ասան ինչ է գրում նա՝

Ձարմանք բազմ է մեր Նոր-Նախիջևանի, Վո՛վ ասի՝ կոտէ՛ լա՛ մեր խօշորձ...  
Հէ՛մ պոլեթոն խօշորձ, Հէ՛մ արջազ-բաշա՛ր  
Հէ՛մ փաղապուրջ, Հէ՛մ միլոնը մաշա՛ր  
Հէ՛մ Մոսկովիէն Հէ՛մ տայմա կըլըրըլը  
Հէ՛մ խեղճ ժամբուս սաակ ճալըրձ անող  
Հէ՛մ սուտ գուրաշ, Հէ՛մ ալ սուտնալան,  
Հէ՛մ փեթուս տալիս փեթեթե հաղան,  
Ասի՛ն շաճնեմա՛մ վերջին տեղացուն,  
Աս մէջ ճոցիս է մեր կօլօվացուն...

Այդ ոտանաւորը Բ. Պատկանեան գրել է 1881 թվին, երբ քաղաքակրթի ընտրվեց 3000 էր: Այժմ այդ ընտրվեց 6000-ի հասում: Մեծացաւ ընտրվել, շատացան և «բոլորակները»: Երկու կայեցէք, այժմ եօթը թեկնածուներ, որոնք ամենաբնի ունեն մի-մի բարեկամ. ուրեմն ամեն մի թեկնածու արդէն ունի 12 սե ընտնել, իսկ բոլոր ձայնավորները թիւն է 28: Ընտրվելը, ի հարկէ, շատ գոհար է:

Միւս պատճառը, որ մեր ընտրութիւններն անապոյ են—դա ինտրիգաներն են: Համարեա ամեն մեկը ընտրվողից որ և է ակնկալութիւն ունի. 28 ձայնավորներից միայն 5-6 հոգի մտա-

բն յնրաւաղէմ, և զոր Չամչեանը չէ կը վարկանի Վեցերորդ դարու հեղինակ, Հ. Յովհաննէս Չոֆապետն չէ: Ինչեզորդ դարու, իսկ Հ. Գար. Չ. չէ անմահութ ժամանակի: Թողով զՍարկաւազապետս, —գործէ պիտի խօսիմ յայլում տեղով, —կանցնիմ ի Քովմա Արծրունի: Ինչ պատճառաւ խաբւած է Չամչեանը՝ զԱրծրունիին Հինգերորդ դարու կատարածին կամ Վեցերորդին սկզբան պատմիչ կարծելու. այն պատճառաւ՝ որ նա ունէր փոքր հատուած մի եւեթ ի Պատմութեան մատնագրիս, «Պատմած յիշատակի վայն արեւմտահայկա Քարսու-մայի» չէ, և զի յայն փոքր հատուածէն անհար էր որոշել զժամանակ Արծրունու, և յայլուտ գիտէր Չամչեան թէ «Քովմա վարդապետ» էր «աշակերտ Նիդիայի» չէ, համարձակած է զՆիդիային նոյնացնել ընդ Նիդիէի վարդապետի՝ պատմագրին Վարդապետից, որով և Քովմա Արծրունի պարծած է Չամչեանին համար ի վախճան Հինգերորդ դարուն, և կամ ի սկզբան Վեցերորդին:

Ներքին էր Հ. Միքայէլի սխալն: Բայց արդեօք ներքին է տարաբանել զժամանակի Թորենացու՞ երբ որոշ կըսէ զանձնէ թէ առաջեցաւ յԱղբըսանդրիս ի Սահակայ և ի Մաշտոցի (Գ. կա. 547), թէ ի դարձին մեծեղ գտաւ զԻւր Վարդապետս (Ողբը, 574—575), երբ դառնացեալ արիւն կը գանդատի թէ յիւր ժամանակահատկէ չը գտաւ զայն ընդունելութիւն զոր կը յուսար, ոչ տուէր, ոչ հանդիստ, ոչ պատիւ (Բ. դր. 385—386, և Ողբը, 575—576), և

1) Պատմութեան չայոյ, Հ. Ա. երես 778:  
2) Գրեթ Պատմիչ, 1796, Յուստիանայ, երես Թ.  
3) Հայկ. Հին Գար. Պատմ., երես 756:  
4) Տղ. Պետրեւորդի, երես 80—81. Չամչեան, Հ. Բ. երես 154—155, 470—471.  
5) Տե՛ն Հ. Գար. Չ. Հայկ. Հին Գար. Պատմ., երես 500, ծանօթութիւն 1:

ծում են քաղաքի շահերի մասին: Չայնաւորների ըմբռնակն կանգնած են թեկնածուների լէյտէնանտներ և ասիւզանտներ. դրանք ձայնավորներ չեն և փոքր քան ի սովորած են՝ նոյնպէս ունենալով իրանց փորագարը: Հակառակորդ թեկնածուներն անստորագրի նամակներ են գրում, պահանջում, որ չը ընտրվեն, փողոցի անկիւններում կանգնած սկսում են բամբասել հակառակորդների մասին և ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում, որպէս զի կարողանան իրանց սիրած թեկնածուին նստեցնել քաղաքակրթի աթոռը: Թէ որ աստիճանի լըրելութեան են հասնում այդ ինտրիգաները, ընթերցողը կարող է իմանալ հետեւեալ դէպքից: Պ. Միսաս Բերբերեան, որ ինքը ձայնավոր չէ, դառնում է մի ձայնավոր և ասում է հետեւեալը. «Ինչ ուզում էք ձեր ընտն տալու Դաւիթ Խօսայեանին, դա արժանի քաղաքակրթի չէ, մեր ընտրեալը պ. Պ. Խաթիւնեանն է. եթէ դուք ընտրէք պ. Խօսայեանին, մենք պիտի ամեն օր գրենք նրա մասին անպատու յօդուածներ: «Որ. Խաթիւնեանը և հետեւեալ նրա ամեն մի քայլին. մենք նրան կ'ուտենք, ինչպէս և կ'երանք Միսաս Պալապանեանին...» Այդպիսի ճանաչում է պ. Միսաս Բերբերեանին, ինչպիսի ակադեմիայի յայտնի մանկաւար ժիւրի, բայց երկի Վովկասը չը գիտէր, որ պ. Միսաս Բերբերեան ունի լաւ ստամոքս, որ կարօտ է ընտն որ և իցէ Եստեթիկոն կամ վիշի հանքային ջրեր... Ցանկացէք պ. Միսաս Բերբերեանին քարի ախորժակ, և երկակայեցէք ձեզ, եթէ համարաւորաւոր պ. Բերբերեան, ինքը չը լինելով ձայնավոր, այնչափ յուզված է ընտրութիւնների ժամանակ, որ մարդակեր է դարձել, ապա ինչքան լըրացած պիտի լինէին միւսները, որ ուսում էլ չեն ստացել և չը գիտեն էլ գեղեցիկ խօսքերով իրանց կեղտոտ մոքերը բողբոկել...

Միսիսթապան երեւոյթ է, ի հարկէ, որ ամեն բան ունի վերջ. գոնէ առայժմ, երբ պ. Մեքենեան-Նիդեան ընտրվեց, կըբերէ հանգստացան, ժողովուրդն ազատ շունչ կարող է քաշել, և եթէ այդ խաղաղութիւնը լրով և յարատե չը լինի, մեղաւորը կը լինի ինչ մեր հոգեւոր իշխանութիւնը, որովհետեւ բոլոր նախիջևանցիներու ջերմ և միակ ցանկութիւնն է այժմ, որ այդ իշխանութիւնը՝ հանդերձ իր կարծիքով եկեղեցական հոգաբարձութեան տան չիմտանալ գործ յանձնելի պ. պրօթորօքին: Մենք հաւատում ենք որ մեր հոգեւոր իշխանութիւնը ամենախղճատաւար կը քննէ այդ գործը և կը տնօրէնէ, ինչպէս հարկն է. մենք հաւատում ենք որ այդ իշխանութիւնը համար լիակց է միայն ճշմարտութիւնը: Կարելի է հարկաւ ամեն տեսակ ընտնութիւն անել և ուրանալ, չը տեսնել ճշմարտութիւնը, ոտնակոխ անել այդ ճշմարտութիւնը, բայց այդ կը նշանակէ միայն գործին վնասել, իսկ ճշմարտութիւնը վերջ ի վերջոյ կը յաղթէ և աւելի հզօր քան թէ այն ոյժը, որով ոտնակոխ էլիք ա-

Փարպեցի ևս կը վկայէ թէ զԵրանելի փիլիսոփայ Մովսէս յաշակոտ և չարախիտ աւերակներն օր տեղեր չէ տեղի հալածական արարել և բազում ինչ իրաւէ թշնամանեցին: Երբ ի սկզբանէ Պատմութեանն մինչև ցաւարտման կը խօսի միմայն Պարպեց տէրութեան վերայ, առանց ամենափոքրիկ ակնարկութեան թէ Արաքսացոյ իշխանութեան և թէ Սօթերորդ—Ուլիբորդ դարուց մէջ Հայաստանի քաղաքական և եկեղեցական մեծամեծ դիպուածոց: Վեցէք են, ստույթներ են Խորենացոյ գրածներն, կաղաղական միաբերան Կարիէրեանը. նա առած է ի Պրօֆանդիս (Վեցերորդ դարը). —առած է ի Յովհաննէս Մալալա Ասորու (Վեցերորդ—Սօթերորդ դարը). —կը յիշէ զԱռաքալի Ս. Գրիգոր (?), եկեղեցին, զոր գիտենք թէ կառուցած է յետ կիսոյ Սօթերորդ դարուն Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսն, մահաւանդեալ Շիրակ—Խորենացոյ ժամօթ են Մեծ և Փոքր Սեղանատոմներն ու Փոքր Սովրատն, որոց հայերէն թարգմանութեան ժամանակն է Սօթերորդ դարու վերջին տարիներն: —Փարպեցու «Երանելի փիլիսոփայ Մովսէս» ոչ է Պատմութեանն Հայոց հեղինակն Մովսէս, ինչպէս և ոչ յիշատակաւն ի Յովհաննէս Աւանեսոյ չէ. «Որ ըստ նոյնանէ (այսինքն ըստ Նիդիայի և ընկերացն), և ոչ հեռի ի նոյնանէ (ճիշդեղայ և յիշակեցն)» մեծն իմաստասիրաց և հռչակաւորն ընդ տիկերս Տէր Մովսէս: Այսպէս Կարիէրեանը:

Նա ալ կը պատասխանեմ. եթէ ունենայինք Խորենացոյ Պատմութեանն քննական հրատարակութիւն, վերջիցեալ առարկութեանց ոչ միայն տեղի կը մնար, և Հայ Մովսէսներու ոչ միայն ընդ իրմէն և ոչ իրմէն Մովսէս Մովսէս, ինչպէս և ոչ յիշատակաւն ի Յովհաննէս Աւանեսոյ չէ. «Որ ըստ նոյնանէ (այսինքն ըստ Նիդիայի և ընկերացն), և ոչ հեռի ի նոյնանէ (ճիշդեղայ և յիշակեցն)» մեծն իմաստասիրաց և հռչակաւորն ընդ տիկերս Տէր Մովսէս: Այսպէս Կարիէրեանը:

1) Թուղթ առ Վահան Մամիկոնեան, երես 607—608:  
2) Ի Ճառքն ընդ զՀէ՛մ երեսութեան և ց. Ս. Վաղար. 1883, երես 66:

նում նրան: Եւ գիտէք ինչու. հենց նրա համար, որ կարելի է փակելով պատուհանները միմյանցի սենեակը, բայց խօսք հրատմով չէ կարելի խաւարեցնել արեգակը: Դժբաղդաբար մենք վաղուց կուրացել ենք և փակելով մեր դռներն ու պատուհանները՝ կարծում ենք, թէ միմյանցում ենք և աշխարհը, և աւելի սոսկալին այն է, որ մենք կարծում ենք, թէ լոյսին ենք ծառայում...

ՆԱՍԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 21-ին  
Հոկտեմբերի 18-ին, ժողովարանի դահլիճում, կայացաւ ձայնավորների ընտրութիւնը՝ 1898—1902 քառամսակի համար: Բայց ընտրողներից, ներկայ էին և բազմաթիւ կողմնակի անձինք, որոնք ներս էին թողնում տոմսակներով: Առաւօտեան ժամը 11-ին քաղաքակրթի Լ. Ն. Ասատրյանի բացեց ժողովը: Նախ կարդացվեցին առաջարկված կանդիդատների անունները՝ թիւով 257, ապա նախագահն առաջարկեց ընտրվել չը ցանկացողներին յայտնել այդ մասին: Ընդամենը ընտրվեց չը ցանկացան 104 հոգի. ընտրողների թիւը հասնում էր 305, որոնցից 28 հոգի ունէին երկու-երկու ձայն: Ժամը մօտ 2-ին սկսվեց ընտրութիւնը, վերջացաւ միւս օրվա առաւօտեան ժամը 10-ին: 104 ընտրվողներից ընդամենը ընտրվեցին 27 հոգի, որոնցից 8 հոգի ուսուներ են, վրացիներ—7, յոյներ—6, հայեր 4 և թուրք—2: Հայերից, ձայների մեծամասնութեամբ, ընտրված են՝ Ա. Խօսայեան, Յ. Խուրադեան, Յ. Պարոնեզեան և Ս. Թառուսեան: Հին ձայնավորներից 19 հոգի սեւացան: Սեւացան նաև ուղարկւայի երկու անդամներ—Գ. Ի. Վոլսկի և Ի. Ա. Իվանով: Իսկ քաղաքակրթը չը ցանկացաւ ընտրվել...

Ընտրութիւնների պայտիս հետեւեալը բոլորին զարմացրեց: Շատերն այն կարծիքի էին, որ վրաց կուսակցութիւնը կը յաղթի: Բայց այդպէս չեղաւ: Վերջը միայն իմացվեց, որ վրացիները երկու իւրաք հակառակ կուսակցութեան են բաժանվել: Ի վերջոյ, սորի ցաւով պիտի մասնակիշ անել հայերի և վրացիների լարված յարաբերութիւնների վրա: Այդ անտեղի թշնամութեան հետեւանք այն եղաւ, որ չը նայած որ հայերը և վրացիները մեծամասնութիւն են կազմում, բայց համեմատաբար աւելի քիչ ընտրվեցին: Պէտք է ընտրվին 41 ձայնավոր, բայց ընդամենը ընտրված են 27 հոգի, այդ պատճառով նըլանակված են լրացուցիչ ընտրութիւններ: Տեսնենք ինչ հետեւեալ կունենայ:

Ս. Մալաբեան

ՆԱՍԱԿ ԿԱԼՁՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 14-ին

Մի ամիս առաջ կատարված և անպատիժ

ամենին երեւելի չէր գանակոծուեր, չէր թաւկոծուեր, չէր թաւախուեր տղան մէջ իւր ետեղէն, զոտեւանայն յուղղակիանէ զանազանեալ անկարող, դառնամալ պատմութեան, ցնդաբան, յանդուգն, ողորմելի, վարձկան, ծառայաւոր, ստրկամիտ, անմիտ, անբարեխիղճ (զաղ-դիւրէն malhonnête ?), կարկառու, խաղաղ, խաբեայ, ստաբիւս, հերոսիկոս (!!!)—խաբալախ, խաբալախ, ստաբիւս, ստաբիւս, հերոսիկոս (!!!) այն անձն զոր Ազգին մէջ կոչողներ կան Սուրբ Հայրն մեր Մովսէս Թորենացի չէ, և իբրեւ Սուրբ ընտնելի եկեղեցին չէ: Առաջիկայ գրութեանն նպատակն չէ պաշտպանել զմեծ Հայն ռոյս և քաղաքակրթացն չէ արժանի երեստ: Թորենացի չէ արժանի իմ պաշտպանութեան, քանզի որչափ և յորդանեղեղ տեղան տարալիներն յիւր վերայ՝ նա չիտրասուգիր յանդուգն, ալ կ'ս քան զկս կը բարձրանայ նման Նոյեան տապանին և վեհութեամբ կը չըջի ի վկանութեան մոնղոլ ալեաց: Պիտի պաշտպանեմ միայն զիմ ուսումն, և պիտի ցուցանեմ թէ որչափ իրաւամբը տարիներէ հետէ պահանջած եմ ընկական հրատարակութիւն Թորենացոյ Պատմութեան:

Նորայր Ն. Բիւզանդացի

(Կը շարունակվի)

1) Վերջոյ Գրեթ Պատմիչ մերոյ Մովսէսի Թորենացոյ նախակրթութեան Հանտարակն, ասացեալ Գրեթ Պատմիչ, հրատ. Հ. Յովհաննէս Չ. Չոֆապետի, Ս. Վաղար. 1796.—Վերջոյ Գրեթ Պատմիչ Մովսէսի Թորենացոյ Մատենադարութեանը. երկրորդ ապագրութիւն, Ս. Վաղար. 1865:  
2) Վերջոյ Գրեթ Պատմիչ, երկրորդ, և Մովսէսի Գրեթ Պատմիչ, և Դաւիթի անգլիոյ փիլիսոփային, և Գրեթի Նախկալեցոյն և Ներսէսի կալեցոյն, և Ներսէսի Լաւրերոսոյն: Օրացոյց և Կալեցոյն օրացոյ, Ս. Վաղար. 1876: Օրացոյց 31 (քառ հին տոմարի): Տես և Օրացոյց 1894 թուականին Քրեւտոսի, էջմածին, Հոկտեմբեր 8 (քառ հին տոմարի):

մնացած չարագործութիւնը առիթ տուեց մի այլ չարագործութեան՝ էլ աւելի առաւել զաղանային կերպով: Մանրամասնութիւնը հետեւեալն է: Հոկտեմբերի 8-ին տանուէր Ղազար Գանահանի դիակը գտան «Թառ» գիւղում փողոցի մէջ ջարդված: Թառ գիւղի բնակիչ Սիմոն Ոսկանեան Միւրիջանեան, որ պարտական էր Ղ. Գանահանեանին 100 ր., հրաւիրում է գիւղ, որ նա գնալ իր ծախելիք այգին դնի պարտքի փոխարէն, կամ գնողից ստանալ 100 ր.: Ամսի 7-ին երեկոյեան ժամը 5-ին Ղ. Գանահանեան ձի նստելով գնում է Թ. գիւղը: Թեղ հասնելուն պէս՝ վէճ է բացվում նրանց մէջ... սակայն, չարագործները նախապէս ծրագրած լինելով իրանց չար նպատակը, մեղմ ու քաղցր խօսքերով Ղ. Գանահանի սիրտը շահում են և, գինի, օղի առաջ բերելով, սկսում են «քէֆ» անել, որ տեսում է մինչև կէս գիշեր, երբ կատարվում է չարագործութիւնը: Փանահանացին լաւ հարեցնելուց մերջը, անկողին են պատրաստում ու ընեցնում վերնոյն սենեակում ու ընած ժիջոցին սպանում, երկաթի գործիքով զլին խեղդով: Չարագործները 5 հոգի են եղել և չարագործութիւնը կատարելուց վերջը դուրս են տարել դիակը, որ անյայտացնեն, բայց մարդ է պատահում, ուստի գցում են փողոցի մէջ ու փախչում: Ամսի 8-ի առաւօտեան մեծ բազմութեան հետ Թ. գիւղը դնացին ընդին ու բռնկել և եղբորութիւնը ժանդարման արձանագրեցին: Սեփեակում, որտեղ կատարվել էր չարագործութիւնը, սրբված արեան կաթիլներ գտնվեցին: Չարագործները բռնկված են, նրանք առարկում են, թէ արիւնը հաւի արիւն է, որ երեկոյեան մարմել են «Ղազար» աղի համար, իսկ ժանջ պատանել է նրանից, որ «Ղազար» աղէն օդայից դուրս է եկել հարկաւորութեան, բայց հարեւոր լինելով՝ դնացի, ընկել է պատից ու մեռել: Այդ պատճառով թափված արիւնը ուղարկվեց Քիֆլիս քննութեան եւթարկելու: Դիակի վրա բազմաթիւ հարուածների վէրքեր կային, որ ցոյց է տալիս, որ մեղաւորների ցուցմունքը ճիշդ չէ: Հասարակութիւնն սպասում է գործի վախճանին: Մ. Ղազարեան

ՆԱՄԱԿ ԽՄԱԿԱՐԴՈՒԹԱՆ

Արաքսալար, հոկտեմբերի 18-ին  
Բարեգործական ընկերութեան Արաքսալարի տեղական վարչութիւնը խնդրում է տեղ տալ «Մշակութային» հետեւեալ երկուօրեան Անցեալ սեպտեմբեր ամսում վարչութիւնը ընկերութեան այստեղի ճիւղի օգտին՝ բարեգործական բաղար սարքեց, որից դուրս արդիւնք եղաւ 163 րուբլի: Վաճառքի համար իրենց նուէրներ էին տնկել և խառնութիւններ: Բազարի նախապատրաստմանը շատ նպաստեց տ. Սօֆիա Միւնասեան, որի միջոցով վարչութիւնը գնումը անկեղծորէն նուէրներ տուցան: Բաւականապէս իրեն և 67 րուբլի, իբրեւ պրեմիա: Վարչութիւնը պարտք է համարում հրապարակական հնորահալութիւն յայտնելու ան բոլոր տիկնիւններին և պարսններին, որոնք չը դնացին նուէրներ տալու, տ. Սօֆիա Միւնասեանին, որը այնքան նպաստեց բազարի աշտոյթները, և այն օրիորդներին, որոնք անկեղծորէն վարչութեան բազարի օրը: Վարչութիւնը պարտք է համարում հնորահալութիւն յայտնելու և արեւստաւոր դատակարարին, որը նպաստեց բազարի կատարեալ աշտոյթները, քանի որ այդ դատակարարից էր բաղկացած գնորդների մեծ մասը: Նախագահ վարչութեան Ջ. Տէր-Գրիգորեան Գործադիր Վ. Մանասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի օրը, հոկտեմբերի 21-ին, Նորին Այստեղական Մեծութեան Նիկողայ II Այստեղական վարչութեան օրը, Սիւնի մայր-եկեղեցում հանդիսաւոր մարմնաց կատարվեց ներկայութեամբ իշխանութեան ներկայացուցիչների: Հանգիստաւորմանը կատարվեց նաև հայոց Վանքի մայր-եկեղեցում, ներկայութեամբ հոգևորական դասի: Նոյնպիսի անգումներ կատարվեցին և միւս դաւանութիւնների տաճարներում: Տօնի առիթով քաղաքը զարդարված էր դրօշակներով:

Մեզ հաղորդում են Երևանից. «Երևանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը վերջապէս տեսնել վարձքը թ. Ս. Շահնազարեանին: Մեր հասարակութիւնը բոլորովին չի ծանալում նոր տեսչին և ուրեմն դժուար է ասել, թէ նա ինչ չափ օգուտ կը բերի դպրոցին: Սպասենք և տեսնենք»:

Պետերբուրգում ապրող մասնագիտականներին թոյլ է տրված չինել երկրորդ մղկիթ. այդ մղկիթը պէտք է ունենայ իր ձուռ և սկզբնական դպրող մասնագիտական երկրանների համար: Պետերբուրգում ապրող բուզդայականները դիմել են կառավարութեան խնդրելով թոյլ տալ կա-

ռուցանել բուզդայական տաճար հարկու հոգու համար:

Երէկ, հոկտեմբերի 22-ին, Քիֆլիսի չերամպայական կայարանում տեղի ունեցաւ այգեգործական ժողովի նիստը, որտեղ Ի. Ֆիգուրովի կարգաւ մի գեկուցում բոյսերի զարգացման և օգեկութեամբական ազդեցութիւնների մասին: Ժողովում կարգաւեց այգեգործական ցուցանիշները պարզ և ստացողների անուանացուցակը:

Չորեքշաբթի, հոկտեմբերի 21-ին, Քիֆլիսի արքեպիսկոպոսութեան ներկայացրին «Եւգենի Օնեգին» օպերան երգչուհի Մարգարի մասնակցութեամբ: Թատրոնը բոլորովին լի էր: Ներկայացումը սկսելուց առաջ օրկեստրը և օպերային երգեցիկ խումբը միասին կատարեցին ռուսաց ազգային «Իմնը» այդ օրվայ, Վայսրի գահակալութեան, տօնի առիթով: Հասարակութիւնն ընդունեց իր ծանօթ երգչուհուն մեծ ոգեկոթութեամբ և տեսց պատկեր: Տ. Մարգարե երգում է նոյն հմտութեամբ, ինչպէս առաջ: Ձայնը փոքր ինչ նուազել է տեմբրի կողմից, բայց նա ունի նախկին գրաւութիւնը և ճկունութիւնը: Երգչուհին ոգեկոթում է է իր խաղով և հանդիսատեսին տալիս է Պուշկինի նշանաւոր գրութեան «Տատիանայի, ամբողջացրած կենդանի տիպը: Միւս խաղացողներից աչքի էր ընկնում երգիչ Վամբուսի Օնեգին: Գերում: Լինելու դերում երգիչ Բորիսնիկո աչքի էր ընկնում տեսարանում, որ տեղի ունի դուէլից առաջ:

ԵՐԵՎԱՆԻՑ մեր թղթակիցը հաղորդում է հոկտեմբերի 18-ից, «Հէնց» այսօր լսեցինք, որ մեր դուռայի ընդհանուր ժողովի որոշումը, քաղաքացիին 5000 ր. ուժիկ յատկացնելու մասին, նախագահական վարչութեան կողմից հաստատվել է, ուրեմն շուտով կը նշանակվի քաղաքացիին ընտրութիւնը:

ԳԵՈՂԱՍԻՑ դաւառի Գիրք գիւղից մեզ դերում են. «Երեկայումս տարածված էր դիֆտերիա հիւանդութիւնը և մեծ քանակութեամբ զոհեր է տանում: Օրեկան մեռնում են մի քանի երեխաներ: Գիրքական հասարակութիւնը բժշկական օգնութիւն խնդրեց, և դաւառական իշխանութիւնը ուղարկեց մի ֆելդշեր: Սակայն տարաբաղդաբար հիւանդութիւնը չի դադարում և շարունակվում է առաջվայ նման»:

ԲԱԳՈՒԻ «Բագու» լրագրից հաղորդում է, որ կովկասեան կառավարչապետը չը հաստատեց Բագուի քաղաքային դուռայի վիճու՝ փողոցները քաղաքի հաշուով ժառանգելու մասին և կարգադրել է, որ այդ պարտաւորութիւնը իրանց վրա վերցնեն տանտէրերը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԻՆ ՑԱՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Ազգութիւնների յամառ և խուլ կոխը Աւստրո-Սերպական պետութեան մէջ շարունակվում է կատաղի և անխնայ կերպով: Բոլոր վանքերը՝ որ և է համաձայնութեան հասնել, անաջող անցան: Այդ չէ կամենում զլլել, որովհետև ոչ ոք չէ կամենում համաձայնութեան հիմք ընդունել հակառակորդի իրաւացի և արդար պահանջները: Թեմի մի ազգ կամենում է պնդել պահել առաջուց ձեռք բերած արտօնութիւնները, թէ և նրանք վնասում են միւս ազգերի կենսական շահերին:

Աւստրական կայսրութեան գերմանական ծագում ունեցող ազգաբնակչութիւնը պահանջում է զլլաւորութեան (հեգեմոնիայի) իրաւունք կայսրութեան մէջ: Իր այդ պահանջը նա հիմնում է այն հանգամանքի վրա, որ ինքն աւելի քաղաքակրթված է, քան կայսրութեան միւս ցեղերը և թուլ ևս գերակշիւ է հանդիսանում սլաւ ցեղի առանձին-առանձին խմբերի վրա: Կայսրութեան սլաւ ցեղը, որ կազմում են չէխերը, լեհերը և մի քանի ուրիշ փոքր ազգութիւններ, չեն ընդունում այդ իրաւունքը և հերքում են պատճառները: Ուրեմն կոխը մեղվում է գերմանական և սլաւ ցեղերի մէջ և այդ կոխը դուրս է մնում ինքնաբերական ազգը, որը, սակայն, գերմանական ցեղի կողմն է բռնում և զլլաւորութեան իրաւունքը նրա կողմն է ծանալում: Գերմանացիները կամենում են, որ նոյն իսկ Բոսնիայի մէջ պետական լեզու ճանաչվի գերմաներէնը և ոչ չէխերէնը: Իսկ չէխերը, որ կազմում են առանձին, ինքնուրոյն ազգ, ունեն սեփական մշակված լեզու, ճոխ դրականութիւն, պահանջում են, որ իրանց երկրում, բոլոր պաշտօնական և հասարակական

առեաններում, դատարաններում գործածվի չէխ լեզուն և դպրոցների, համալսարանների մէջ ուսումը լինի չէխ լեզուով:

Գերմանական տարրի պահանջները միանգամայն անարդար են մինչև այն աստիճան, որ նոյն իսկ ուղղադատներն սկսել են այժմ պաշտպանել չէխերին: Ուղղադատական պարլամենտի փոխ-նախագահ և Բուդապէշտի համալսարանի պրոֆէսոր Լուի Լանդ մի մեծ յօդուած տպելով «Revue politique et parlementaire» հանդիսի մէջ՝ ապացուցանում է, որ գերմանացիների ձգտումը հեգեմոնիա ձեռք բերելու անիրաւացի է և ուղղադատները մեծ սխալ են գործում պաշտպանելով գերմանացիների անարդար պահանջը, այլ, ընդհակառակը, նրանք պէտք է անցնեն սլաւների կողմը: Զօդաւոր հեղինակը ճիշդ թանշաններ է վիճակագրական տեղեկութիւնների հիման վրա, ապացուցանում է, որ սլաւականութիւնը կլանում է գերմանականութեանը դանդաղ, բայց անընդհատ և անխուսափելի կերպով: Աւստրիայի բոլոր սլաւ նահանգներում ազգաբնակչութիւնը աճում է անհամեմատ աւելի մեծ քանակութեամբ, քան գերմանական նահանգներում: Իսկ նահանգների մէջ դարձեալ սլաւ տարրը աւելի արագ է աճում, քան գերմանական տարրը: Ուրեմն իսկ գերակշիւութիւնը, որի վրա հիմնում են գերմանացիները իրանց պահանջը, կերտիկայի չէ դիմանում: Անհիմն է նոյնպէս և գերմանացիների երկրորդ փաստը, թէ իրանք գերակշիւ են հանդիսանում քաղաքակրթական տեսակէտից: Անհերքելի վիճակագրական տեղեկութիւններով պրոֆէսոր Լանդ ապացուցանում է, որ գերմանական կուլտուրան ամեն տեղ յետ է մղվում սլաւ կուլտուրայից: Այժմ սլաւ բարբառները տարածվում են և յետ են մղում գերմանականը, այլ նոյն իսկ բարձր և միջնակարգ դպրոցներում գերմանական տարրը նուազում է աչքի ընկնող չափով և աճում է սլաւ տարրը: Ուրեմն գերմանացիների մտաւոր հեղեմոնիան ևս շատ մօտ ապագայում պէտք է անհետանայ: Այդ փաստերի հիման վրա Լանդ խորհուրդ է տալիս իր հայրենակիցներին՝ թողնել մի դատ, որ աշտոյթիւն չը պէտք է ունենայ:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բօստօն, հոկտեմբերի 18-ին  
Հասարակ ամերիկացիներին համար աշխարհէ, գրեթէ քաղաքակրթեալ աշխարհը Ատլանտեանի և Խաղաղական եղբայրները կը վերջնապէս: Նախքան դանդաղում մէջ Միացեալ-Նահանգները տրեղեկաց տեղ կը բռնեն, այս պատճառաւ է, որ լրագրութիւնը, գրականութիւնն այնքան քիչ կը դադարէ Ամերիկայի սահմանէն դուրս խնդիրներով: Քաղաքագետի մը ընտրութիւնը, հոգեւ մը, հնդկներու արշաւանք մը շատ մեծ տեղ կը բռնեն թերթի մը մէջ, որ երկու տողոց հեռավորով մը Ռուսիոյ Ցարին խաղաղութեան հրաւերը կամ Սուլթանի անգլիական յաղթութիւնը կը յիշատակեն: Վերջին Սպանիո-Ամերիկեան պատերազմի հետեւանքներէն մին ալ այն եղաւ, որ Ամերիկեան ստիպուեցաւ դուրս ելնել իր կղզիացեալ դիրքէն: Խաղաղականի և Ատլանտեանի մէջ նոր ստացուածքներ, նոր դժուարութիւններ և հետեւեալ նոր գործունէութիւն և քաղաքականութիւն յառաջ կը բերեն: Ամերիկացի մի լուրջ մասը որքան ալ որ ողբայ Միացեալ-Նահանգաց կառավարութեան իր ստորական ճանքային չելովը, ամերիկեան մտքին իր անձուկ սահմանէն դուրս ելնելն ոչ որքան պէտք է տեսնուի պատճառէ: Պատերազմէն ետքը՝ նշանաւոր գրողներ սկսած են լուրջ ուշադրութեան առնել եւրոպայի բանակները, նաւատորմները, արհեստական մանրամասնութեամբ, անոնց յարաբերական արժէքէն իրենց երկրի ուժը չափելու համար: Ամերիկայէն դուրս քաղաքակրթ շախարհի տնտեսական վիճակին ուսումնասիրութիւնն ալ ուրիշ նոր երևոյթ մ'է: Եւրոպայի գիտնորութիւնն այնքան սերտ կապուած է տնտեսական հարցին հետ, որ դեռ պատերազմ ետքող թղթակիցներն անգամ չեն կրնար չը դիտել դայի: Ձիւնաւորական բեռնի սարսափն այսօր Ամերիկայի պետական քաղաքականութեան ամենէն մեծ պատուարն է: առանց այդ վախին ամերիկացիք թերեւ ամենաւնի չը վարանէին իրենց հանդիպած բոլոր սպանիական կղզիների իւրացնելու, բայց Եւրոպայի օրինակն իրենց առջև ամենէն ազդու դասն է:

Այնքան քաղաքական ընտրութեանց ժամանակ է, անոր համար այս հարցերը ամեն տեղ օրուան խնդիրն են: Չը կարծուի թէ Ամերիկեան իշխութեան կողմնակի իւրացնելու, բայց Եւրոպայի օրինակն իրենց առջև ամենէն ազդու դասն է: Այնքան քաղաքական ընտրութեանց ժամանակ է, անոր համար այս հարցերը ամեն տեղ օրուան խնդիրն են: Չը կարծուի թէ Ամերիկեան իշխութեան կողմնակի իւրացնելու, բայց Եւրոպայի օրինակն իրենց առջև ամենէն ազդու դասն է: Այնքան քաղաքական ընտրութեանց ժամանակ է, անոր համար այս հարցերը ամեն տեղ օրուան խնդիրն են: Չը կարծուի թէ Ամերիկեան իշխութեան կողմնակի իւրացնելու, բայց Եւրոպայի օրինակն իրենց առջև ամենէն ազդու դասն է:

Ներ կը շուրջեն, խոստումներ, սակայն, որ երբեք իրականանալու երևոյթ չունեն նոյն իսկ հարուստներու սիրական նախադասին օրով: Հակառակ արեւմուտի երկրագործներու մեծ յաջողութեան, հակառակ Ալաբայի ոսկիին, հակառակ նոյն իսկ պատերազմին յաջողող գործունէութեան՝ գործաւորներու օրականները երթալով կը նուազի, անպիսի մրցումը, որքան մ'ալ խլրտել սկսել են արեւմուտքի հանքագործերը, որ իրենց ստիկ անասնական կեանքը պահելու համար դեռնին խորբը պիտի աշխատեն ամբողջ օրը: Վարձը այնքան վար ինկել է, որ հազիւ կարելի է աւելի վար ինալ: Բանտորները գործադուլ ըրին. այս պարագային գործադուլ յօժարակամ սովամահ լինել պիտի նշանակէ: հանքատէրերը հարաւին սկսել բերին իր աման գործաւոր, հին բանտորները սպառնացան, հանքին հարուստ տէրերը իրենց դրամով մարդիկ վարձեցին, որ զենքով հանքերը պաշտպանեն, որովհետեւ Իլլինոյսի կառավարիչը մերժեց դանոնք պաշտպանել իրենց սե գործաւորներ բերելը դատապարտելով: Այսպէս կառավարութիւնը մէկ դի կեցաւ, որ մը կուեցան երկու կողմը: գիտէք որքան հարուստներն հին բանտորները և նոր վարձած մարդիկ: Երկու կողմէն ալ մարդիկ մեռան 20-էն աւելի և 50-ի չափ վիրաւորուեցան, քանի մը ընտանիքներ ամբողջովին անխնամ մնացին: Գիտնորութիւնը և խուժովիւնը կը շարունակուի դեռ:

Արեւելեան նահանգաց մէջ ալ Մասաչուսէթի կոչիլի արտագործութիւնը մեծ տեղ կը բռնէ: հնդկ չարաթէ ի վեր մեծ թուով կոչիլի գործաւորներ գործադուլ ըրած են, երկու կողմէն ալ յամառ կուռել որքան են: Բայց ինչ կրնայ ընել գործաւորը, երբ մէկին տեղ երեք չորս հոգի կաղանք գործատիրոջ, որ զիրենք բանագնէ: մի քանի հայեր ալ պարագայէն օգուտ քաղել ուղղով գործադուլ ընդհանուր տեղը մտնել չանային:

Երեք չարաթ առաջ բերտանական գիտնական ընկերութեան մը առջև նշանաւոր անգլիացի գիտնական մը Քրաքս ճառ մը կարդաց, որով կուռել ապացուցանել, թէ աշխարհի ցորենի արտադրութիւնը թուաբանական համեմատութեամբ կաճի, մինչդեռ ցորեն ուտողները երկրաչափական համեմատութեամբ կը շատնան: գիտնական անդրադարձնաւ արտադրութեան ցորենի մեծ սղուլութիւն և սով կը գուշակէ: Մի քանի ամերիկացիներ այս ճառին ի պատասխան իրենց երկրին անսպառ արտադրութեան չափը ցոյց տըւին վիճակագրութեամբ: Միացեալ-Նահանգաց հողը եթէ մշակուի, բաւական է Եւրոպայի կեանքներու, ըլնի, թող տուր Աֆրիկէն և հարաւային Ամերիկայի դեռ անմշակ դաշտերը: Հետաքրքրութիւնը այն է սակայն որ իր թուայն չորս անգամը մարդիկ կերակրելու կարող Ամերիկեան այնքան անօթիներ ունի: Նիւ-Յորքը քաղաքի մէջ ամեն օր միջին հաշուով երկու անձնասպանութիւն տեղի կունենայ և անձնասպանութեան հարկին 60-ը սոսկ վրամահ լինելու վախէն կը պատճառուի: Երէկ Բոստօնին մէջ քաղաքագետը ժողովի մը միջոցին հասարակութեան ուշադրութիւնը կը դարձնէր այն հաղորդումը մարդոց վրայ, որ ինչ ընելին չեն գիտեր:

Գուպայի և Ֆիլիպինա կղզիներու խնդիրը քաղաքատմաբան տնտեսական և ընկերական այս հարցերուն՝ խաղալիք պէտք է համարեն: Վերջիններու գործը կարգադրել վերջ դառնալու մը գործին, կրնէ Նիւ-Յորքի թերթ մը սակայն օր-քան դժուար է այդ գործը: Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Allg. Zeitung» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը նկատում է, որ թիւրքաց հայերը համոզում են կայացրել, թէ Վիլհէլմ կայսրը իրանց պաշտպան դուրս կը դալ և հոգ կը տանի իրանց վիճակը բարելոքելու: Հայոց դնելով, թէ ինչ բան կարող էր առաջ բերել այդպիսի համոզումն, թղթակիցը անդիպեցինք իրաւ վրա է գցում պատասխանատուութեան մի մասը: Անգլիացիները, ասում է նա, անպայման խրախուսել են հայերին, բայց մի քանի անգամ չեն մտածել իրանց սեփական ոյժերով պաշտպանել նրանց և թոյլ չը տալ, որ նրանք իրաւունքներ ունակուի լինեն: Երբ թիւրքաց կառավարութիւնը խիստ կերպով հրամանագրեց հայոց պատրիարքին՝ հոգ տանել, որ հայերը հանդուրժան Վիլհէլմ կայսրի Կ. Պոլսում գտնված ժամանակ, նրանց մէջ առաջ եկաւ այն համոզումն, թէ գերմանական կայսրը իրանց պաշտպան է հանդիսանալու: Մենք չենք կարծում, որ թիւրքաց հայերը այդպիսի համոզումն կապեցին: Նրանք շատ լաւ գիտեն այն ջերմ բարեկամութիւնը, որ Վիլհէլմ տաժում է դէպի կարմիր սուլթանը... —Պարիզից հեռագրում են, որ հանրապետու-

